

## **Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ**

#### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ապահովման» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ապահովման) տնտեսական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ապահովման կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է Ապահովմանի և դրա կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների տնտեսական սպասարկման աշխատանքները:

2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և գործունեությունը դադարեցնում է Ապահովմանի կանոնադրությանը համապատասխան:

3. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Ապահովմանի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

4. Բաժինն Ապահովմանի ղեկավարի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների հետ:

5. Բաժնի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, Ապահովմանի ղեկավարի հրամաններով և այլ իրավական ակտերով:

#### **2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

6. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) Ակադեմիայի և դրա կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների տնտեսական սպասարկման աշխատանքների, նյութատեխնիկական սպասարկման ապահովումը,

2) Ակադեմիայի բոլոր մասնաշենքերի շահագործման և դրանց ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացումը և կազմակերպումը,

3) Ակադեմիայի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների իրականացումը,

4) Ակադեմիայի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պետական գնումների անվանացանկերի կազմման աշխատանքներին մասնակցելը:

### **3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

7. Բաժնի գործառույթներն են՝

1) Ակադեմիայի գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման և պահեստավորման աշխատանքների իրականացումը, Ակադեմիայի անվամբ ստացված գույքն ու ապրանքանյութական արժեքները հավատարմագրերով ստանալը,

2) Ակադեմիայի պահպանման ծախսերով նախատեսված կոմունալ-կենցաղային ծառայությունների ձեռքբերման պայմանագրերի կազմման և կնքման աշխատանքների վարումը,

3) Ակադեմիայի բոլոր մասնաշենքերի շահագործման և դրանց ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացումը և կազմակերպումը,

4) Ակադեմիայի գույքագրման աշխատանքների կատարումը,

5) Ակադեմիայի աշխատողների, սովորողների կողմից սպառած էլեկտրաէներգիայի և խմելաջրի ծախսերի օրական հաշվառման, ինչպես նաև կապի ծառայությունների գծով ծախսերի հաշվառման վարումը,

6) կաթսայատների անխափան և անվտանգ շահագործման իրականացումը,

7) Ակադեմիայի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պետական գնումների անվանացանկերի կազմման աշխատանքներին մասնակցելը,

8) Ակադեմիային սպասարկող ծառայողական ավտոմեքենաների ուղեգրերի լրացման և վառելանյութի ծախսի շարժի վարումը,

9) Ակադեմիային սպասարկող ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական գնման աշխատանքների իրականացումը:

#### **4. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

8. Բաժնի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի ռեկտորը:
9. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է Ակադեմիայի ռեկտորի կողմից:
10. Բաժնի պետը հաշվետու է Ակադեմիայի ռեկտորին, վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորին:
11. Իր գործունեության ընթացքում Բաժնի պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, Ակադեմիայի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ:
12. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի՝ սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթների պատշաճ իրականացման համար:

#### **5. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

13. Բաժնի աշխատողների թիվն ու մասնագիտական կազմը սահմանում է Ակադեմիայի ռեկտորը:
14. Բաժնի աշխատողների գործառույթները, մասնագիտական որակավորումները, լիազորությունները, ինչպես նաև իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատողների աշխատանքային պայմանագրերով, պաշտոնների անձնագրերով և այլ իրավական ակտերով:
15. Անհրաժեշտությունից ելնելով՝ Բաժնի պետի առաջարկությամբ ռեկտորի կողմից Բաժնի կանոնադրական խնդիրների լուծման համար ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: